Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 11 փետրվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը նախագահությամբ՝ Հ.Նազարյանի, անդամակցությամբ՝ Հ.Դանիելյանի եւ Ռ.Պապայանի, քննության առնելով ՀՀ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի կողմից ներկայացված դիմումի ընդունելիության հարցը

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Քաղ. Ռուբեն Թորոսյանը դիմել է Սահմանադրական դատարան՝ (30.01.2009թ. մտից թիվ 4-28) վիճարկելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-րդ եւ 8-րդ մասերով սահմանված դրույթների սահմանադրականությունը:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 4-րդ մասի համաձայն անհատական դիմումը պետք է պարունակի վիճարկվող նորմը Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Բացի այդ, պետք է հիմնավորվի նաեւ վիճարկվող նորմը կոնկրետ գործով դիմումատուի նկատմամբ կիրառվելու հանգամանքը, <u>երբ առկա է ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարաններում գործը լուծող վերջնական դատական ակտը</u> (ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մաս):

Տվյալ դեպքում, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-րդ մասի դրույթները կոնկրետ գործով իր նկատմամբ կիրառելու հանգամանքը դիմումատուն փաստում է սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմի «<u>23.01.08</u> որոշմամբ», որպիսի պնդումը դատական կազմը հիմնավոր չի համարում: Քաղ. Ռուբեն Թորոսյանի 2009 թվականի հունվարի 8-ի մտից թիվ 4-1 դիմումի ընդունելիության հարցի քննարկման արդյունքում դատական կազմն որոշում կայացրել է <u>2009 թվականի հունվարի 23-ին</u>՝ կոնկրետ հիմք ընդունելով վերոհիշյալ օրենքի 27 հոդվածի 3-րդ մասի, 32 հոդվածի եւ 69 հոդվածի 7-րդ մասի պահանջները:

Բացի այդ, դիմումատուն իր նախկին՝ 2009 թվականի հունվարի 16-ին սահմանադրական դատարան ներկայացրած դիմումով (մտից թիվ 4-8) բարձրացրել է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 8-րդ մասի սահմանադրականության հարց, որը քննության ընդունելը 2-րդ դատական կազմի կողմից մերժվել է՝ նույն օրենքի պահանջներին չհամապատասխանելու եւ օրենքով սահմանված պետական տուրք չվճարելու հիմքերով (տե՛ս ՍԴ 2-րդ դատական կազմի 2009 թվականի փետրվարի 3-ի որոշումը):

Քաղ. Ռուբեն Թորոսյանը փաստորեն միեւնույն հարցով, նույնպիսի հիմնավորումներով եւ առանց պետական տուրք վճարելու կրկին դիմել է սահմանադրական դատարան՝ անտեսելով դատարանի 2-րդ դատական կազմի վերոհիշյալ որոշումը՝ ներկայացնելով օրենքի դրույթների սահմանադրականության հարց («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի կանոններով)՝ միաժամանակ փորձելով իր փաստարկները հիմնավորել՝ առաջնորդվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74 հոդվածում նախատեսված դրույթներով:

Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմն անհրաժեշտ է համարում կրկին նշել, որ իր որոշումներով (23.01.2009թ., 03.02.2009թ. եւ 05.02.2009թ.) մերժելով բաղ. Ռուբեն Թորոսյանի համանման հիմնավորումներով դիմումների (08.01.2009թ. մտիկ թիվ 4-1, 16.01.2009թ. մտիկ թիվ 4-6, 16.01.2009թ. մտիկ թիվ 4-8) քննության ընդունումը, դատական կազմը պարզաբանել է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի հիմքով ներկայացված դիմումը նույն օրենքի 74 հոդվածի կանոններով քննության ընդունելու անհիրավաչափությունը:

3. Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27, 69 հոդվածներով, սահմանադրական դատարանի կանոնակարգի 26 հոդվածի 3-րդ մասով, սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց

Քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումի քննության ընդունումը մերժել՝ չբավարարելով պետական տուրք վճարելուց ազատելու վերաբերյալ նրա միջնորդությունը:

Նախագահող՝ Հ.Նազարյան

Անդամներ՝ Հ.Դանիելյան

Ռ.Պապայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽ ԴԱՏԱՐԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ